ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունվարի 2022 թվականի № Ա
քաղ. Երևան

## «ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԲԱՐԻ ԱՐԵՎ-2» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի հուլիսի 24-ի №273Ա որոշմամբ «ԲԱՐԻ ԱՐԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածքում կառուցված «Բարի Արև-2» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0645 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա), ինչի համար ի թիվս այլ փաստաթղթերի հիմք է հանդիսացել նաև 2019 թվականի մարտի 5-ի էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-200-35/0058 նախնական տեխնիկական պայմանը,

2) Ընկերությունը 2021 թվականի դեկտեմբերի 22-ին ներկայացրել է արտադրության փուլ անցնելու նպատակով Լիցենզիայում փոփոխություններ կատարելու մասին դիմում և սակագնի սահմանման (վերանայման) հայտ՝ ի թիվս այլ փաստաթղթերի կից ներկայացնելով նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մայիսի 20-ի էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-200-35/0058-Հ տեխնիկական պայմանը, համաձայն որի փոփոխվել են բաշխման ցանցին Կայանի միացման լարման պայմանները՝ նախկին 35 կՎ-ի փոխարեն դառնալով 10 կՎ,

3) Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի 11-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ հայտը Հանձնաժողովում մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովը հայտն ընդունում է ուսումնասիրության: Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտն ընդունվել է ուսումնասիրության, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի №ԱՍ/34.3-Մ2-5/4514-2021 գրությամբ,

4) 2020 թվականի հոկտեմբերի 6-ից գործող խմբագրությամբ Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի (այսուհետ՝ Մեթոդիկա) 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Մեթոդիկայի 7-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ առաջին անգամ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում սահմանվելու պարագայում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխման (ընդլայնման) կամ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխման դեպքերում՝ սահմանվում է Մեթոդիկայի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն համապատասխան ժամանակահատվածի համար ձևավորված մեծության և 0.9 գործակցի արտադրյալին հավասար,

5) Ընկերության կողմից ներկայացված՝ Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ այդ սակագինը ենթակա է սահմանման ներկայումս գործող Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ

ենթակետի «ա» պարբերության համաձայն, քանի որ տեղի է ունեցել Լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխություն, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետը, Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն, Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 26-ի №198Ն որոշումները և հաշվի առնելով «ԲԱՐԻ ԱՐԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 22-ին ներկայացրած «Բարի Արև-2» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. «ԲԱՐԻ ԱՐԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Բարի Արև-2» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 23.584 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 28.301 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հանձնաժողով և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի -ից և գործում է մինչև 2022 թվականի հուլիսի -ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հունվարի 2022թ.